

Հ ԱՅ ԱՍՏ ԱՆԻ Հ ԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅ ՈՒՆՈՒՄ (ԱՐՑ ԱԽԸ ՆԵՐԱՌՅ ԱԼ)

ՆՈՐԳԱՂՈՒԹՅՑ ԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ Հ ԱՂԹԱՀ ԱՐՄԱՆ ԵՎ

ՆՈՐ ՈՐԱԿԻ Հ ԱՅ ԿԱԿԱՆ ՊԵՏ ՈՒԹՅ ԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ Հ ԱՄԱՀ ԱՅ ԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ*

Ծ Ր Ա Գ Ի Ր

Քայլ 1. Շարժման կառուցվածքային կայացում

Քայլ 2. Չորս քաղաքային տեղի վրա կառավարման մարմինների ձևավորում և գործունեություն

Քայլ 3. Չորս քաղաքային տեղի վրա կառավարման մարմինների կազմակերպում

Քայլ 4. Գործող վարչախմբի հեռացում և անցումային կառավարում

Քայլ 5. Նորոքակի պետություն ձևավորման գործընթացի ծավալում

Նախաակը՝

Համահայկական շարժման ծավալմամբ Հայաստանի Հանրապետությունում (Արցախը ներառյալ) նորգաղաքային կենտրոնների վերածված պետական կառավարման համակարգի նոր ստեղծվող կառավարման մարմինների շուրջ ժողովրդի համախմբման և նրա կազմակերպության իրավապահության գործադրման միջոցով վարչախմբի հեռացում և նորոքակի հայկական պետության ձևավորում:

Քայլ 1. Շարժման կառուցվածքային կայացում

Հայաստանի Հանրապետության (Արցախը ներառյալ) ամբողջ տարածքում և արտերկրի գաղթօջախներում Համահայկական շարժման տեղական մարմինների ցանցի (այսուհետև՝ Շարժում) ձևավորում:

Քայլ 2. Չորս քաղաքային տեղի վրա կառավարման մարմինների ձևավորում և գործունեություն

2.1. Անցումային ժողովրդավարության կարգի ներդրվող չորս քաղաքային տեղի վրա կառավարման մարմինների ձևավորում:

- Արդարության առյան (անցումային արդարադատության կարգի ներդրվող հաշվառմամբ),
- Հիմնադիր խորհրդարանի ընտրական հանձնաժողով,
- Հիմնադիր խորհրդարան,
- Անցումային կառավարություն:

* Շարժման ծրագրում և Նախախորհրդարանի այլ փաստաթղթերում «Հայաստանի Հանրապետությունում (Արցախը ներառյալ)» ձևակերպումը կիրառվում է ոչ թե իրավական, այլ քաղաքական-ծրագրային իմաստով, քանի որ Նախախորհրդարանը նախատեսում է Շարժման ծրագրին իրագործել և անդե ֆակտո Հայաստանի Հանրապետության մասը կազմող Արցախի տարածքում և դրա ավարտին ներկայիս Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անցկացվել հանրապետության արդյունքների հիման վրա Արցախը և անդե յուրե միավորել Հայաստանի Հանրապետությանը: (Պարզաբանումը և արագվել է Նախախորհրդարանի 2014 թ. մայիսի 3-ի որոշմամբ):

2.2. Հիմնադիր խորհրդարանի գումարում** և դրա գործունեության իրականացում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում (Արցախը ներառյալ) նորոգելի պետության ձևավորման ու զարգացման ռազմավարական հայեցակարգի ընդունում:

2.3. Անհրաժեշտ պահին Անցումային կառավարության ձևավորում և դրա գործունեության իրականացում:

Քայլ 3. Զուգահեռաբար ստեղծվող կառավարման մարմինների լեզվափոխում

Բաց հանրաքվեի տարբերակով Հիմնադիր խորհրդարանի և պետական կառավարումից վարչախմբի հեռացման հայտնեկայացնելու համար քաղաքացիներին*** միջև նորոգելի պետության ձևավորման պայմանագրերի կնքում:

Քայլ 4. Գործող վարչախմբի հեռացում և անցումային կառավարում

4.1. Շարժման վերածում անհաղթահարելի ուժի՝ նրա կազմակերպվածության, կայունության, ինքնավարության, նպատակասլացության և այլ հատկանիշներին շնորհիվ:

4.2. Ըստ ներքնհիշյալ սցենարների հետևյալ գործողությունների իրականացում:

Սցենար 1. Վարչախումբը հեռանում է **(հեռացվում է)** մինչև բավարար քանակով քաղաքացիների հետ պայմանագրերի կնքումը****:

• Պայմանագրերի կնքման գործընթացի շարունակում՝ լիարժեք լեզվափոխության հասնելու նպատակով,

• Պայմանագրի դրույթներին համապատասխան Անցումային կառավարման փուլի հայտարարում,

• Նորոգելի պետության կառուցման գործընթացի նախապատրաստում:

Սցենար 2. Վարչախումբը շարունակում է պետական կառավարումը բավարար քանակով քաղաքացիների հետ պայմանագրերի կնքումից հետո:

• Լիարժեք լեզվափոխության իրավունքի հաշվառմամբ գործող վարչախմբին պետական կառավարումից հրաժարվելու հայտի ներկայացում և դրա իրականացման ապահովում և Շարժման անհաղթահարելի ուժի գործադրման միջոցով,

• Գործող վարչախմբի հեռացումից հետո Պայմանագրի դրույթներին համապատասխան Անցումային կառավարման փուլի հայտարարում,

• Նորոգելի պետության կառուցման գործընթացի նախապատրաստում:

Քայլ 5. Նորոգելի պետության ձևավորման գործընթացի ծավալում

(Անցումային ժողովրդավարությունից դեպի կայուն ժողովրդավարություն հաստատում)

Անցումային կառավարման փուլի ավարտին ժողովրդավարական արտահերթ ընտրությունների անցկացման միջոցով օրենսդիր, գործադիր, դատական և պետական կառավարման այլ անհրաժեշտ մարմիններին ձևավորում:

** Հիմնադիր խորհրդարանը գումարման պահից ստանձնում է Շարժման կառավարումը:

*** Պետական կառավարումից վարչախմբի հեռացման հայտնեկայացնելու համար քաղաքացիներին համարվում է պաշտոնական տվյալներով ամենաշատ մասնակցություն արձանագրած համապետական ընտրությունների մասնակցների թվի կեսից ավելի **(50%+1)** քանակով քաղաքացիներին հետ պայմանագրերի կնքումը: Ըստ պաշտոնական տվյալների, մասնակցների ամենամեծ թիվն արձանագրվել է 2008 թ. փետրվարի 19-ին ախազահական ընտրությունների **(1.671.027 մասնակից)**, որի **50%+1** -ը կազմում է **835.514**:

**** Ժողովրդի կամքի և նրա շարժման իշխանության ընդունման վերահաստատման նպատակով վարչախմբի հեռացման համար նպաստավոր պայմաններին առկայություն և պարագայում վարչախումբը կարող է հեռացվել նաև Շարժման ճշմամբ, որի ընթացքում ժողովրդի կարող է դիմել քաղաքացիական անհազանդություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ինքնապաշտպանություն:

www.preparliament.com

<http://www.facebook.com/Nakhakorhdaran.33>